ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԷՋԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6

ք. Երևան «17» Մայիս 2017թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համացանցային (www) էջի ձևավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **800000 (ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով

սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն	**«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ**
ք. Երևան, Նալբանդյան-13	**ք. Երևան, Կ.Ուլնեցի 68**
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,**
Հ/Հ 900011556355	**Զեյթուն մ/ճ**
ՀՎՀՀ 02505511	**Հ\Հ 163518012543**
	ՀՎՀՀ 02602449
Աշխատակազմի ղեկավար՝	**Գործադիր տնօրեն՝**
Մ. Մինասյան	**Ա. Աբրահամյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«17» Հոկտեմբեր 2017թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1 – ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ (www) ԷՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵԲԿԱՅՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

1. Նախաբան

Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններն իրականացվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում:
Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Ծառայությունը, որը ծառայությունների մատուցման արդյունքում պետք է իրականացնի արդիականացված www.ssa.am վեբկայքի շահագործումը:

2. Անհրաժեշտությունը

Ծառայության ներկայիս www.ssss.am վեբկայքը բաղկացած է երկու ենթահամակարգերից՝ օգտվողի և կառավարման (ադմինիստրատիվ), (պետք է վերանայվի վեբկայքի առկա կառուցվածքը):

Օգտվողի ենթահամակարգը հնարավորություն է ընձեռում ապահովել օգտվողի համար տեղեկատվության դիտման և որոնման ինտերֆեյսները:

Վեբկայքի կառավարման առկա ենթահամակարգը հնարավորություն է ընձեռում կառավարել հետևյալ մոդուլները՝

- **Բովանդակության կառավարման մոդուլ (Content Management System)**
  Բովանդակության կառավարման մոդուլը հնարավորություն է ընձեռում կառավարել վեբ բովանդակության ստեղծումը, ձևափոխումը, դասակարգումը, վավերացումը և հրապարակումը: Վեբկայքի յուրաքանչյուր բաժնի համար առկա է բովանդակության կառավարման առանձին գործիք: Բովանդակության կառավարման գործիքների հասանելիությունը տրամադրված է համաձայն անվտանգության մեխանիզմների, որոնք ապահովվում է անվտանգության մոդուլը:

  Բովանդակության կառավարման մոդուլը վեբկայքի ադմինիստրատորին հնարավորություն է տալիս իրականացնել հետևյալ գործառույթները.

  - Ավելացնել նոր բաժին և ենթաբաժին (նախապես որոշված տեղում և նախապես որոշված կառուցվածքով, այնպես որ վեբկայքի դիզայնը չխախտվի):
  - Ցուցադրել կամ չցուցադրել բաժինը կամ ենթաբաժինը
  - Անվանափոխել բաժինը և ենթաբաժինը
  - Այլ:

- **Տեղեկատվության պահոց մոդուլ/տեղեկատվական շտեմարան**
  Տեղեկատվության պահոց մոդուլը/Տեղեկատվական շտեմարանը ներկայացնում է ՏՇ-ը, որը պարունակում է վեբկայքի տվյալների ամբողջությունը: Տեղեկատվության պահոց մոդուլը նաև պահպանում է օգտվողի վերաբերյալ տեղեկատվությունը:

- **Անվտանգության մոդուլ**
  Անվտանգության մոդուլը օգտվողին շնորհված դերի հիմքով ապահովում է անվտանգության ծառայություն՝ հնարավորություն ընձեռելով սահմանափակել օգտվողի համար վեբկայքի էջերի և բաղադրիչների հասանելիությունը: Վեբկայքի անվտանգությունը ապահովվում է օգտվողների նույնականացումը՝ օգտվողի անվան ու գաղտնաբառի միջոցով: Անվտանգության մոդուլը հնարավորություն է ընձեռում վեբկայքի բոլոր օգտվողներին մուտքի իրավասությունների սահմանման համար: Այսպիսով, յուրաքանչյուր մակարդակի օգտվող ունի վեբկայքի բովանդակության հասանելիության իր իրավասությունները: Վեբկայքի ադմինիստրատորը օժտված է համակարգ մուտք գործելու և փոփոխություններ կատարելու ապահով մեխանիզմներով՝ հիմնված ապահով պրոտոկոլների օգտագործման վրա:

  Վեբկայքի բովանդակության կառավարման մոդուլի բոլոր օգտվողները ստեղծվում են վեբկայքի ադմինիստրատորի կողմից: Վեբկայքի բովանդակության կառավարման մոդուլի իրավասու օգտվողի կողմից տեղեկատվության (ամսաթիվ. օգտվող, բաժին) հետ կատարված բոլոր տիպի վերջին փոփոխությունները և թարմացումները գրանցվում են և հասանել են վեբկայքի ադմինիստրատորին:

Հաշվի առնելով վերոնշյալը և ուղղորդվելով արդի աշխարհում առկա միտումներով՝ նպատակահարմար է արդիականացնել **www.ssss.am** վեբկայքը՝ ապահովելով արդիական լուծումներ, ինչպես նաև ապահովել բջջային հեռախոսներից օգտվողին հարմար ինտերֆեյս (արդիականացված վեբկայքը պետք է լինի mobile friendly):

3. Նպատակը

Վեբկայքի նպատակն է աջակցել ՀՀ կենսաթոշակային համակարգի մասին արդիական տեղեկատվությունը հավուր պատշաճի ներկայացնելու համար և ապահովել կենսաթոշակային ոլորտի համակարգային փոփոխությունների հասանելիությունը բոլոր շահառուներին՝ նպաստելով բնագավառի իրադարձությունների մասին քաղաքացիների իրազեկմանը:

4. Ծառայության արդիականացված www.ssa.am վեբկայքին ներկայացվող հիմնական պահանջները

Ծառայության վեբկայքի արդիականացման համար պետք է մշակել նոր դիզայն, վեբկայքը պետք է բաղկացած լինի երկու ենթահամակարգերից՝ օգտվողի և կառավարման (ադմինիստրատիվ):
Ըստ անհրաժեշտության պետք է փոփոխություններ իրականացվի առկա վեբկայքի կառավարման ենթահամակարգում կամ նոր ներկայացված և Պատվիրատուի կողմից հաստատված դիզայնի համար առաջարկվի նոր կամ արդեն գոյություն ունեցող լուծում:
Ապահովել վեբկայքի որոնման համակարգերում օպտիմալացումը (SEO: Search Engine Optimization), և սոցիալական ցանցերում վեբկայքի վարումը: Պետք է վերանայվի վեբկայքի առկա կառուցվածքը և պետք է ապահովել բջջային հեռախոսներից օգտվողին հարմար ինտերֆեյս (արդիականացված վեբկայքը պետք է լինի mobile friendly):

5. Իրականացվելիք աշխատանքների շրջանակը

Ծառայության վեբկայքի արդիականացումը նախատեսվում է իրականացնել 3 փուլով:

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ նախատեսվում է իրականացնել հանդիպում-քննարկումներ Ծառայության ներկայացուցիչների հետ և մշակել վեբկայքի արդիականացման համար տեխնիկական առաջադրանքը, ներառյալ՝

- Կատարող ընկերությունը Ծառայության հաստատմանը պետք է ներկայացնի գրաֆիկական դիզայնի առնվազն 3 օրինակ:

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ նախատեսվում է.

- ըստ տեխնիկական առաջադրանքի՝ արդիականացնել վեբկայքի ծրագրային ապահովումը և տեղեկատվական շտեմարանը
- իրականացնել վեբկայքի ծրագրային ապահովման և տեղեկատվական շտեմարանի տեղակայումը
- իրականացնել ամբողջական վեբկայքի թեստավորում և թեստավորման արդյունքների հաշվառմամբ՝ լրամշակել վեբկայքը:

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ նախատեսվում է.

- մշակել օգտվողի ձեռնարկ և վեբկայքի տեխնիկական փաստաթղթերը
- ուսուցման ենթակա մասնագետների ցանկի պատրաստում
- իրականացնել բովանդակության կառավարման մոդուլի օգտվողների ուսուցում
- պատրաստել վեբկայքի շահագործման մեկ տարվա երաշխիքային սպասարկման Ծառայությունների մակարդակի համաձայնագիր (SLA) և ներկայացնել Ծառայության հաստատման, ստորագրման և կնքման համար:

6. Ակնկալվող արդյունքները

Տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվում է.

- հաստատված տեխնիկական առաջադրանք
- վեբկայքի հաստատված գրաֆիկական դիզայն՝ Կատարող ընկերությունը Ծառայության հաստատմանը պետք է ներկայացնի գրաֆիկական դիզայնի առնվազն 3 օրինակ
- **առաջին փուլի հաշվետվություն**
- թեստավորված, գնահատված և Ծառայությունում տեղակայված լիարժեք գործող վեբկայք
- **երկրորդ փուլի հաշվետվություն**
- վերապատրաստված մասնագետ(ներ), ովքեր կունենան համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ վեբկայքի բովանդակության կառավարման համար
- **երրորդ փուլի հաշվետվություն**, այդ թվում
    - ✓ վեբկայքի ծրագրային ապահովման սկզբնական կոդերը (համապատասխան նկարագրություններով)
    - ✓ տեղեկատվական շտեմարանի դամփը
    - ✓ օգտվողի ձեռնարկը
    - ✓ թարմացված տեխնիկական առաջադրանքը
- վեբկայքի ընդունման-հանձնման հաստատված ակտ
- վեբկայքի հանձման-ընդունման ակտի հաստատումից հետո Կատարող ընկերությունը պետք է մեկ տարվա համար ապահովի տեղեկատվական շտեմարանի արխիվացում (Backup),
- վեբկայքի շահագործման մեկ տարվա երաշխիքային սպասարկման հաստատված Ծառայությունների մակարդակի համաձայնագիր (SLA):

Սկիզբ	Ավարտ
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից	30 սեպտեմբեր 2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան-13
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

Աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
Ա. Աբրահամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«17» Հոկտեմբեր 2017թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ (www) ԷՋԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ ընթացքում՝ ընդ որում			
		2-րդ եռամսյակ	**3-րդ եռամսյակ**	**4-րդ եռամսյակ**	Ընդամենը Տարի
1	Համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ	0	0	800000	**800000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան-13
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

Աշխատակազմի ղեկավար՝
Մ. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,
Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝
Ա. Աբրահամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«___»_____ 2017թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցի 68
ՀՀ 163518012543
ՀՎՀՀ 02602449

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ք. Երևան, Նալբանդյան-13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«___»_____ 2017թ. կնքված
N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ---------- ---- -ին կնքված N **ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՇՀԾՁԲ-17/6** գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. ---------- ------ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն